ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

___Հայոց լեզվի և գրականության_______
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __8__

«_23_» __սեպտեմբեր__ 2023թ.

<u>ՀԼԳ/բ–014</u> <u>«ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ԴԱՍԸՆԹԱՑԻ</u>

Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 023102.00.6 Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 023102.01.6 Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Բանասիրության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ **հեռակա**
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ ____I կուրս, II կիսամյակ

Դասախոս(ներ)՝ <u>Դավիթ Գյուլզադյան</u>

Էլ. հասցե/ներ՝ davitgiulzadyan@gmail.com

Վանաձոր 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը կրթական ծրագրով սահմանված խնդիրների լուծման գործընթացում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    12.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    12.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    14.2. Հարցաշար
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### 1. Դասընթացի դերը կրթական ծրագրով սահմանված խնդիրների լուծման գործընթացում[1]

«Գործնական հայոց լեզու» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրիատի հատուկ կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրիատի կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

Առարկայական փաթեթը կարգավորում է «Գործնական հայոց լեզու» դասընթացի ուսումնամեթոդական նյութերով ապահովման, պարբերաբար թարմացման, առարկայի նոր մոտեցումների ոգուն համապատասխանեցման գործընթացը, նպաստում է ուսանողի անհատական և ինքնուրույն աշխատանքի արդյունավետության, նրա գիտական իմացության ձեռքբերման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև լեզվաբանության ոլորտի տեսական դասընթացներին նախապատրաստելուն:

**Ծրագրի մեկնաբանությունը**: Առաջարկվող դասընթացի առանձնահատկությունը նրա բացառապես գործնական ուղղվածությունն է:

Բանասիրական մասնագիտացում ձեռք բերող ուսանողը պետք է քաջապես յուրացրած լինի դպրոցական քերականության դասընթացը, որն իրական հիմք կդառնա լեզվաբանության գալիք մասնավոր և ընդհանուր տեսական դասընթացների համար:

Քանի որ դասընթացի համար չկա միասնական ձեռնարկ, **գրականության ցանկում տրված է միայն լրացուցիչ գրականություն**:

### 2. Դասընթացի նպատակը և խնդիրները

**2.1.** Դասընթացի նպատակն է՝ 1) ամրակայել դպրոցում ձեռք բերած քերականական գիտելիքները, 2) հիմք ապահովել լեզվաբանական ոլորտի տեսական դասընթացների համար:

**2.2.** Գիտակարգի **խնդիրն** է նպատակին հասնելու համար ուսանողին ընտելացնել նախադասության բազմաստիճան վերլուծությանն ու համադրությանը:

### 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

Ուսանողը, ընդունվելով բանասիրական մասնագիտացմամբ համալսարան, պետք է իմանա և ամրակայի հայոց լեզվի հնչյունաբանության, բառագիտության, քերականության ու ոճաբանության՝ իր մակարդակին համապատասխան կայուն գիտելիքներ:

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

**4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2].**

**Ա) Ընդհանրական գիտակություն** (կոմպետենցիա)

ա) գործիքային գիտակություն.

1) վերլուծելու և համադրելու ունակություն,

2) արտածելու և մակածելու ունակություն,

3) կազմակերպելու և նախագծելու ունակություն.

բ) միջանձնային գիտակություն.

1) քննադատական վերլուծություն և ինքնաքննադատության ունակություն,

2) լեզվաբանական տարրական գիտելիքներով անձանց խմբում աշխատելու ունակություն,

գ) համակարգային գիտակություն.

1) գիտելիքը գործնականում կիրառելու կարողություն, գրական լեզվի բանավոր և գրավոր ձևերով կիրթ հաղորդակցվելու ունակություն,

2) նոր իրավիճակներին հարմարակվելու ունակություն,

3) ստեղծագործելու և ունակություն:

**Բ) Առարկայական գիտակություն**

1) դրսևորել գրական հայերենի կառուցվածքային մակարդակների տարրական իմացություն,

2) ըմբռնել դասընթացի ընդհանուր կառուցվածքի և նրա բաղադրիչների միջև առկա կապերը:

***5.* Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում՝ ըստ աշխատաշուկայի պահանջների[3].**

«Գործնական հայոց լեզու» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և բանասիրության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

*6.* Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը.

| Չափանիշ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 2 կրեդիտ/60 ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ |
|---|---|
| Գործնական աշխատանք | 8 |
| Ինքնուրույն աշխատանք | 52 |
| **Ընդամենը** | 60 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք |

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, փոխներգործուն ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **<u>Ինքնուրույն աշխատանքը</u>** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներից լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի դասընթացին կիրառվում են հետևյալները[5].

- **<u>Զեկույց</u>** – ուսանողի՝ որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հարցուպատասխանը, երկխոսություն, դասախոսությունը, քննարկումը, բանավեճի ապահովումը, իրավիճակային խնդիրների վերլուծությունը ևլն:
9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, խմբային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման ուրվագծերի կազմում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում ևլն:

---

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | |
|---|---|---|---|
| | | գործնական աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Հանրակրթական դպրոցում ձեռք բերած գիտելիքների ստուգում և կարգաբերում: Բայական համակարգի էությունը: Եղանակա-ժամանակային ձևերի հարացուցային պատկերը: Անվանական և դերանվանական հոլովումներ | 1 | 6 |
| 2. | Հիմքակազմություն: Բայական և անվանական հիմքերի կազմավորման առանձնահատկությունները: Խոնարհման և հոլովման անկանոնություններ: Բառակազմական վերլուծություն | 1 | 6 |
| 3. | Նախադասության կառուցվածքային տեսակները: Դրանց յուրացման կարևորությունը՝ մտքի տրամաբանական ընթացքը ճշգրտորեն արտահայտելու գնահատմամբ | 1 | 6 |
| 4. | Վանկատում և տողադարձ: Ուղղաբանությունը՝ որպես ուղղախոսության, ուղղագրության և քերականական կանոնների պահպանման գիտակարգ: Գրական լեզվի ուղղախոսական առանձնահատկությունները: Հնչերանգային ուղղախոսություն | 1 | 8 |
| 5. | Գրական լեզվի ուղղագրական համակարգը: Կետադրական ուղղագրություն: Հնչյունաբանական և վանկակազմական վերլուծություն | 1 | 6 |
| 6. | Խոսքամասային փոխանցումներ: Ձևաբանական վերլուծություն | 1 | 6 |
| 7. | Փոխակերպում և շարահյուսական համանշություն: Ստորադաս նախադասության և դերբայական դարձվածի համարժեքությունը: Դրական և ժխտական, դրական և հարցական, հարցաժխտական նախադասություններ: Շարահյուսական վերլուծություն | 1 | 6 |
| 8. | Տեքստի կառուցվածքը: Նախադասության վերլուծություն և համադրություն: Բազմաբարդ նախադասությունների կաղապարում-գծագրավորում | 1 | 8 |
| Ընդամենը | | 8 | 52 |

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Լրացուցիչ գրականություն (ԼԳ) | | |
| 1. | Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն | 1981 |
| 2. | Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն | 1975 |
| 3. | Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Բառ և խոսք | 1978 |
| 4. | Պ. Պողոսյան, Հայոց լեզու, ուսումնա-օժանդակ ձեռնարկ | 1976 |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձև | Գրականություն[6] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հանրակրթական դպրոցում ձեռք բերած գիտելիքների ստուգում և կարգաբերում: Բայական համակարգի էությունը: Եղանակա-ժամանակային ձևերի հարացուցային պատկերը: Անվանական և դերանվանական հոլովումներ | Հնչյուն, բառ, բառաձև, արմատ, ածանց, նախադասություն, տեքստ: Խոսքի մասեր: Բայական վերջավորություններ և ժամանակներ: Գոյականական վերջավորություններ, անվերջավոր ձևեր, հոլովումներ: հիմք և վերջավորություն: Դերանվանական վերջավորություններ, դեմք, թիվ, հոլով և հոլովում | 1 | բանավոր հարցում | ԼԳ 1, 2, 3 |
| 2. | Հիմքակազմություն: Բայական և անվանական հիմքերի կազմավորման առանձնահատկությունները: Խոնարհման և հոլովման անկանոնություններ: Բառակազմական վերլուծություն | Բայական, անվանական և դերանվանական հիմքեր | 1 | բանավոր հարցում | ԼԳ 4 |
| 3. | Նախադասության կառուցվածքային տեսակները: Դրանց յուրացման կարևորությունը՝ մտքի տրամաբանական ընթացքը ճշգրտորեն | Պարզ և բարդ նախադասություններ, նախադասության անդամներ | 1 | բանավոր հարցում | ԼԳ 1, 2 |

[6] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | արտահայտելու գնահատմամբ | | | | |
| 4. | Վանկատում և տողադարձ Ուղղաբանությունը՝ որպես ուղղախոսության, ուղղագրության և քերականական կանոնների պահպանման գիտակարգ: Գրական լեզվի ուղղախոսական առանձնահատկությունները: Հնչերանգային ուղղախոսություն | Բաց և փակ վանկեր, գաղտնավանկ | 1 | բանավոր հարցում | ԼԳ 1,2, 5, 6 |
| 5. | Գրական լեզվի ուղղագրական համակարգը: Կետադրական ուղղագրություն: Հնչյունաբանական և վանկակազմական վերլուծություն | Ձայնավորանիշների, երկբարբառանիշների և բաղաձայնանիշների ուղղագրությունը | 1 | բանավոր հարցում | ԼԳ 5 |
| 6. | Խոսքամասային փոխանցումներ: Ձևաբանական վերլուծություն | Խոսքի մասեր: Ձևաբանական վերլուծության կարգը | 1 | բանավոր հարցում, անցած նյութի կարգաբերում | ԼԳ 4 |
| 7. | Փոխակերպում և շարահյուսական համանշություն: Ստորադաս նախադասության և դերբայական դարձվածի համարժեքությունը: Դրական և ժխտական, դրական և հարցական, հարցաժխտական նախադասություններ: Շարահյուսական վերլուծություն | Փոխակերպում և փոխակերպներ: Նախադասության կառուցվածքային և եղանակային տեսակները: Շարահյուսական վերլուծության կարգը | 1 | բանավոր հարցում | ԼԳ 1, 2, 4 |
| 8. | Տեքստի կառուցվածքը: Նախադասության վերլուծություն և համադրություն: Բազմաբարդ նախադասությունների | Տեքստ, նախադասություն Գծագրավորման կարգը | 1 | բանավոր հարցում | ԼԳ 3, 1, 2, 4 |

| | կաղապարում-գծագրավորում | | | | |
|---|---|---|---|---|---|

## 12.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[7] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[8] |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հանրակրթական դպրոցում ձեռք բերած գիտելիքների ստուգում և կարգաբերում | Հնչյուն, բառ, բառաձև, արմատ, ածանց, նախադասություն, տեքստ | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 1, 2, 3 |
| 2. | Բայական համակարգի էությունը: Եղանակա-ժամանակային ձևերի հարացուցային պատկերը: Անվանական և դերանվանական հոլովումներ | Խոսքի մասեր: Բայական վերջավորություններ և ժամանակներ: Գոյականական վերջավորություններ, անվերջավոր ձևեր, հոլովումներ: հիմք և վերջավորություն: Դերանվանական վերջավորություններ, դեմք, թիվ, հոլով և հոլովում | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 3 |
| 3. | Հիմքակազմություն: Բայական և անվանական հիմքերի կազմավորման առանձնահատկությունները: Խոնարհման և հոլովման անկանոնություններ: Բառակազմական վերլուծություն | Բայական, անվանական և դերանվանական հիմքեր | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 4 |

[7] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Նախադասության կառուցվածքային տեսակները: Դրանց յուրացման կարևորությունը` մտքի տրամաբանական ընթացքը ճշգրտորեն արտահայտելու գնահատմամբ | Պարզ և բարդ նախադասություններ, նախադասության անդամներ | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 1, 2 |
| 5. | Վանկատում և տողադարձ | Բաց և փակ վանկեր, գաղտնավանկ | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 1, 2, 5, 6 |
| 6. | Ուղղաբանությունը` որպես ուղղախոսության, ուղղագրության և քերականական կանոնների պահպանման գիտակարգ | Ձայնեղ բաղաձայնների շնչեղացում` համապատասխան դիրքում | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 1, 3 |
| 7. | Գրական լեզվի ուղղախոսական առանձնահատկությունները: Հնչերանգային ուղղախոսություն | Հնչերանգ, շեշտ | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 6 |
| 8. | Գրական լեզվի ուղղագրական համակարգը: Կետադրական ուղղագրություն: Հնչյունաբանական և վանկակազմական վերլուծություն | Ձայնավորանիշների, երկբարբառանիշների և բաղաձայնանիշների ուղղագրությունը | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 5 |
| 9. | Խոսքամասային փոխանցումներ: Ձևաբանական վերլուծություն | Խոսքի մասեր: Ձևաբանական վերլուծության կարգը | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 4 |
| 10. | Փոխակերպում և շարահյուսական համանշություն: Ստորադաս նախադասության և դերբայական դարձվածի համարժեքությունը: Դրական և ժխտական, դրական և հարցական, հարցաժխտական նախադասություններ: Շարահյուսական վերլուծություն | Փոխակերպում և փոխակերպներ: Նախադասության կառուցվածքային և եղանակային տեսակները: Շարահյուսական վերլուծության կարգը | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 1, 2, 4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Տեքստի կառուցվածքը: Նախադասության վերլուծություն և համադրություն | Տեքստ, նախադասություն | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ 3 |
| 12. | Բազմաբարդ նախադասությունների կաղապարում-գծագրավորում | Գծագրավորման կարգը | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | Բանավոր հարցում | ԼԳ1, 2, 4 |

## 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[9]

| Դասընթացի ուսումնական աշխատանքի ձևերը | Կիրառվող նյութատեխնիկական միջոցի անվանումը | Լսարանի ապահովում |
|---|---|---|
| Դասախոսություն | գրատախտակ | սովորական |
| Գործնական աշխատանք | գրատախտակ | սովորական |
| Ինքնուրույն աշխատանք | գիտական և ուսումնական ձեռնարկներ, համացանց | սովորական |

[9] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ)անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ամփոփիչ ստուգում և գնահատում կիսամյակի ավարտին (քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի

ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

**14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.**

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ավարտին ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող ամփոփիչ ստուգման և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[10]

**14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)**

1. Բայական համակարգի էությունը:
2. Եղանակա-ժամանակային ձևերի հարացուցային պատկերը:
3. Անվանական և դերանվանական հոլովումներ
4. Հիմքակազմություն: Բայական և անվանական հիմքերի կազմավորման առանձնահատկությունները:
5. Խոնարհման և հոլովման անկանոնություններ: Բառակազմական վերլուծություն
6. Նախադասության կառուցվածքային տեսակները: Դրանց յուրացման կարևորությունը՝ մտքի տրամաբանական ընթացքը ճշգրտորեն արտահայտելու գնահատմամբ
7. Վանկատում և տողադարձ
8. Ուղղաբանությունը՝ որպես ուղղախոսության, ուղղագրության և քերականական կանոնների պահպանման գիտակարգ
9. Գրական լեզվի ուղղախոսական առանձնահատկությունները:
10. Հնչերանգային ուղղախոսություն
11. Գրական լեզվի ուղղագրական համակարգը:
12. Կետադրական ուղղագրություն:
13. Հնչյունաբանական և վանկակազմական վերլուծություն
14. Խոսքամասային փոխանցումներ: Ձևաբանական վերլուծություն
15. Փոխակերպում և շարահյուսական համանշություն:
16. Ստորադաս նախադասության և դերբայական դարձվածի համարժեքությունը:
17. Դրական և ժխտական, դրական և հարցական, հարցաժխտական նախադասություններ: Շարահյուսական վերլուծություն
18. Տեքստի կառուցվածքը: Նախադասության վերլուծություն և համադրություն
19. Բազմաբարդ նախադասությունների կաղապարում-գծագրավորում

---

[10] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** **023102.00.6** Հայոց լեզու և գրականություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **023102.01.6** Հայոց լեզու և գրականություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Բանասիրության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Հեռակա ուսուցման համակարգ

| Դասընթացի թվանիշը, անվանումը | ՀԼԳ/բ–014 -ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ | | | |
|---|---|---|---|---|
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 2 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 1-ին  տարի, 2-րդ կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 8 | Դասախոսություն | - |
| | | | Գործնական աշխատանք | 8 |
| | Ինքնուրույն | 52 | | |
| | Ընդամենը | 60 | | |
| Ստուգման ձևը | ստուգարք | | | |
| Դասընթացի նպատակը | Դասընթացի նպատակն է՝ 1) ամրակայել դպրոցում ձեռք բերած քերականական գիտելիքները, 2) հիմք ապահովել լեզվաբանական ոլորտի տեսական դասընթացների համար: | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br><br>*Գիտելիք – դասընթացի վերջում ուսանողը ձեռք է բերում լեզվական իրակությունների մակարդակային միավորների նախնական պատկերացում*<br><br>*Հմտություն – դասընթացի վերջում ձեռք է բերում լեզվական միավորները տրամաբանորեն միմյանց հակադրելու և սահմանային տարբերակման ենթարկելու հմտություն*<br><br>*Կարողունակություն – դասընթացի վերջում ուսանողը կարողաքնում է բազմաստիճան վերլուծության ենթարկել շարահյուսական բարդ ամբողջությունը* | | | |
| Դասընթացի բովանդակությունը | *Թեմա 1.* Բայական համակարգի էությունը: Եղանակա-ժամանակային ձևերի հարացուցային պատկերը: Անվանական և դերանվանական հոլովումներ<br>*Թեմա 2.* Հիմքակազմություն: Բայական և անվանական հիմքերի կազմավորման առանձնահատկությունները: | | | |

| | |
|---|---|
| | Խոնարհման և հոլովման անկանոնություններ: Բառակազմական վերլուծություն<br>*Թեմա 3.* Նախադասության կառուցվածքային տեսակները: Դրանց յուրացման կարևորությունը՝ մտքի տրամաբանական ընթացքը ճշգրտորեն արտահայտելու գնահատմամբ<br>*Թեմա 4.* Վանկատում և տողադարձ<br>*Թեմա 5.* Ուղղաբանությունը՝ որպես ուղղախոսության, ուղղագրության և քերականական կանոնների պահպանման գիտակարգ<br>*Թեմա 6.* Գրական լեզվի ուղղախոսական առանձնահատկությունները: Հնչերանգային ուղղախոսություն<br>*Թեմա 7.* Գրական լեզվի ուղղագրական համակարգը: Կետադրական ուղղագրություն:<br>*Թեմա 8.* Հնչյունաբանական և վանկակազմական վերլուծություն<br>*Թեմա 9.* Խոսքամասային փոխանցումներ: Ձևաբանական վերլուծություն<br>*Թեմա 10.* Փոխակերպում և շարահյուսական համանշություն: Ստորադաս նախադասության և դերբայական դարձվածի համարժեքությունը: Դրական և ժխտական, դրական և հարցական, հարցաժխտական նախադասություններ: Շարահյուսական վերլուծություն<br>*Թեմա 11.* Տեքստի կառուցվածքը: Նախադասության վերլուծություն և համադրություն<br>*Թեմա 12.* Բազմաբարդ նախադասությունների կաղապարում-գծագրավորում |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | • Տեսական գիտելիքները՝ մանկագրության ընդհանուր գործընթացի իմացություն:<br>• Գործնական աշխատանքները՝ նվազագույնը 3 ստուգում՝ գումարային 40 միավոր գնահատմամբ:<br>• Ինքնուրույն աշխատանքը՝ 2 ինքնուրույն աշխատանքի կատարում: |
| **Գրականություն** | Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն<br>Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն<br>Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Բառ և խոսք<br>Պ. Պողոսյան, Հայոց լեզու, ուսումնա-օժանդակ ձեռնարկ |